

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց 1205/B44 «Երկրագիտություն» /առաջին օտար լեզու՝ անգլերեն/

Որակավորման աստիճան՝ Բակալավրի կրթական ծրագիր

Կազմեց՝ ք.գ.թ. դոցենտ Բարսյան Ա. Մ.

ԵՐԵՎԱՆ - 2015

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1205/B44 «Երկրագիտություն» /առաջին օտար լեզու՝ անգլերեն/ (2 կրեդիտ)

Դասախոսություն 20 ժամ, սեմինար 12 ժամ

«Երկրագիտություն» /առաջին օտար լեզու՝ անգլերեն/ դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ուսումնա-մեթոդական խորհրդի և միջազգային հարաբերությունների ու դիվանագիտության ամբիոնի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան:

Երկրագիտությունը միջդիսցիպլինար գիտություն է, որը համակարգված և բազմակողմանի գիտելիքներ է հաղորդում տվյալ երկրի կամ երկրների պատմության, աշխարհագրության, սոցիալ-քաղաքական և մշակութային կյանքի կարևոր փուլերի և առանձնահատկությունների մասին: Երկրագիտությունն իբրև գիտություն ձևավորվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Մառը պատերազմի տարիներին, երբ աշխահաքաղաքական խնդիրների լուծման տեսանկյունից օրվա հրամայական էր դարձել այս կամ այն երկրի վերաբերյալ հնարավորինս սեղմ և բազմակողմանի գիտելիքներ ստանալը: Գիտության կազմավորման ակունքներում կանգնած են լեզվաբաններ, պատմաբաններ, քաղաքագետներ, սոցիոլոգներ, մշակութաբաններ:

Երկրագիտություն դասընթացը ներառում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի և Բրիտանական համագործակցության այլ երկրների քաղաքական, տնտեսական, գիտամշակութային և այլ բնագավառների ուսումնասիրությունը: Դասընթացի շրջանակներում անդրադարձ է կատարվում այդ երկրների պետականության կազմավորմանն ու կայացմանը, արտաքին և ներքին քաղաքականության կարևոր զարգացումներին, տնտեսական և մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններին, աշխարհաքաղաքական գործընթացներում նրանց դերակատարմանն ու ազդեցությանը, և այլն: Առանձնակի ուշադրություն է դարձվում այն պատմա-քաղաքական իրողություններին, որոնք վճռորոշ նշանակություն են ունեցել համաշխարհային քաղաքական և իրավական գործընթացների համար:

«Երկրագիտություն» /առաջին օտար լեզու՝ անգլերեն/ կրթական ծրագրով դասընթացի ուսուցումը նախատեսվում է իրականացնել միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների համար:

Դասընթացի ավարտից հետո ուսանողները պատկերացում կունենան ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի աշխարհագրության, պատմության, քաղաքական համակարգերի, տնտեսության, քաղաքականության, մշակութային կյանքի և ներկայիս քաղաքական զարգացումների մասին, կստանան միջմշակութային հաղորդակցման համար անհրաժեշտ բազային գիտելիքներ, կսովորեն ինքնուրույն կերպով երկրագիտական տեղեկատվություն ստանալու եղանակներն ու հմտությունները:

ԲԱԺԻՆ 1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1.1. Դասընթացի նպատակը

Դասընթացում ներկայացվում են անգլիախոս երկրների հասարակությունների զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները, համակարգում է այդ երկրների քաղաքական և տնտեսական զարգացման վերաբերյալ նրանց պատկերացումները և միտված է նպաստել ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների շուրջ նրանց մտեցումները պատմական պատճառա-հետևանքային համատեքստում ձևավորելու կարողությունների զարգացմանը:

Դասընթացի նպատակային խնդիրներն են՝

1. Ուսանող միջազգայնագետին ծանոթացնել անգլո-սաքսոնական աշխարհի կայացման և ազգերի ձևավորման կարևորագույն փուլերին՝ անդրադարձ կատարելով այդ երկրների քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման հիմնական ուղենիշներին:
2. Ուսանողին ներկայացնել այն հիմնական համակարգային մտեցումները, որ տվյալ երկրների անցած ուղին թողել է համաաշխարհային քաղաքական, իրավական և տնտեսական մշակույթի վրա:
3. Ուսանողի համար բացահայտել այն պատճառա-հետևանքային կապերը, որոնք ձևավորում են տվյալ երկրների վարած ներկայիս քաղաքական մտեցումները:
4. Ուսանողին սովորեցնել քննարկվող նյութի վերաբերյալ ինքնուրույն կերպով ավելի բազմակողմանի և ստույգ տեղեկատվություն ստանալու բազային հմտությունները:
5. Ուսանողի մոտ ձևավորել տեղեկատվության համադրական վերլուծության կարողություն՝ հենվելով ստացած գիտելիքների հիմնապաշարի վրա:
6. Ուսանողի մոտ մշակել անգլերենով երկրագիտական գիտելիքների շուրջ հաղորդակցման կարողություն և հմտություններ՝ գործնականում օգտագործելով նրանց լեզվական գիտելիքները:

1.2. Դասընթացի խնդիրները

«Երկրագիտության» դասընթացն առաջադրում է հետևյալ խնդիրները.

- Ուսանողների մոտ ստեղծել ուսումնասիրվող երկրների հասարակական-քաղաքական և պատմա-մշակութային ժառանգության վերաբերյալ

գիտելիքների բազային պաշար՝ միաժամանակ ծանոթացնելով նրանց երկրագիտության հիմնական եզրույթներին, հասկացություններին և իրականություններին,

- գործնական պարապմունքների միջոցով հասնել անգլերեն լեզվով երկրագիտական գիտելիքների հաղորդման համակողմանի դրսևորման ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը,
- նպաստել ուսումնասիրվող երկրների պատմության, քաղաքականության, հասարակական-մշակութային կյանքին առընչվող թեմաների շուրջ բանավոր շփմանն ու հաղորդակցման հմտությունների զարգացմանը,
- զարգացնել ուսանողի կարողությունը՝ արտահայտել և փաստարկել իր տեսակետը, ինչպես նաև բանավիճել ներքին և արտաքին քաղաքականության առանցքային խնդիրների շուրջ՝ վերլուծական համադրություններ անելով և օգտագործելով տվյալ դասընթացի ժամանակ քննարկվող հիմնական հասկացություններն ու տեղեկատվությունը,
- տիրապետել ինքնուրույն աշխատանք կատարելու հմտություններին՝ երկրագիտական թեմատիկայով ուսումնական, գիտական գրականության, ինչպես նաև՝ ընթացիկ մամուլում տեղ գտած տեղեկատվության հետ աշխատելուն:

1.3. Դասընթացի տեղը սոցիո-հումանիտար կրթության համակարգում

Երկրագիտությունը դիտարկվում է որպես մի գիտակարգ, որը ձևավորվել է աշխարհագրության, պատմության, ազգագրության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, մշակութաբանության փոխներթափանցումների արդյունքում: Այն օրգանապես կապված է հումանիտար գիտակարգերի հետ, մասնավորապես պատմության, քաղաքագիտության, մշակութաբանության և սոցիոլոգիայի հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի հետազոտողներից, փորձագետներից, քաղաքագետներից և դիվանագետներից շատերը համակարծիք էին այն հարցում, որ հետագա համաշխարհային առճակատներից խուսափելու համար նրանք կանգնած են աշխարհի մյուս երկրների մասին բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերելու հրամայականի առջև: Իբրև արդյունք ստեղծվեցին բազմաթիվ գիտահետազոտական կենտրոններ, զարկ տրվեց օտար լեզուների ուսուցմանը, և կտրուկ անցում կատարվեց տարբեր երկրների և տարածաշրջանների համատեքստում միջազգային խնդիրների համապարփակ ուսումնասիրությանը: Այդ

գիտահետազոտական կենտրոններում սոցիոլոգները և այլ հումանիտար գիտությունների մասնագետները ուսումնասիրում էին տարբեր ժողովուրդների պատմության, մշակույթի, լեզվի, տնտեսական զարգացման, հասարակական շարժումների ու պետության կայացման ու զարգացման գործընթացները: Համանման օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ երկրագիտությունը զարգանում և տարածում է ստանում իբրև գիտակարգ՝ ներամփոփելով մի շարք հումանիտար և հասարակական գիտությունների տեսական, մեթոդաբանական և գործնական-կիրառական բաղադրատարրերից:

Տեսական և գործնական հետազոտությունների արդյունքում երկրագիտությունը տարբեր երկրների և տարածաշրջանների վերաբերյալ ընդարձակ գիտելիքներ է հաղորդում, որոնք իրենց անմիջական գործնական կիրառությունն են գտնում միջազգային հարաբերությունների գործընթացների, որոշակի քաղաքական մոտեցումների ձևավորման, երկրների համագործակցության և միջազգային շփումների իրականացման համատեքստում/ժամանակ:

1.4. Դասընթացի կրթական արդյունքները

Ա. Ըստ վերլուծական իրազեկության՝ կապված տեղեկատվության և գիտելիքի կառավարման հետ

- 1) Համացանցով գրադարանային ռեսուրսներից արդյունավետ կերպով օգտվելու հմտությունների մշակում, ինչպես նաև՝ համացանցից անհրաժեշտ թեմատիկայի շրջանակներում համապատասխան տեղեկատվական աղբյուրների որոնման հմտությունների զարգացում:
- 2) Ստացված տեղեկատվությունը վերլուծելու և համակարգելու ունակությունների բարելավում, ինչպես նաև՝ այդ տեղեկատվությունը համակարգչային միջոցներով սեղմ վերարտադրելու հմտությունների զարգացում:
- 3) Էմպիրիկ տվյալների հիման վրա համադրական վերլուծական կարողությունների ձևավորում և մշակում:

Բ. Ըստ հաղորդակցային իրազեկության

- 1) Թիմային աշխատանքի խթանում՝ առաջադրված խնդրի համակողմանի քննարկման, բացահայտման և ներկայացման միասնական կատարողականի առաջադրմամբ:

- 2) Անգլերենով պատմա-քաղաքական և մշակութային խնդիրների շուրջ գիտելիքների բանավոր վերարտադրության (ելույթ, զեկուցում, քննարկում) հմտությունների զարգացում:
- 3) Երկրագիտություն առարկայի թեմատիկ շրջանակներում ձեռք բերած գիտելիքները անգլերենով գրավոր ներկայացնելու ունակությունների զարգացում:

1.5. Կրթական մեթոդները (պարապմունքների անցկացման ձևերը)

- ա) Դասախոսություններ՝ Power Point սլայդ-պատկերների պարտադիր բաղադրամասի ընդգրկմամբ:
- բ) Սեմինար պարապմունքներ՝ թիմային և անհատական աշխատանքի զուգադրմամբ:
- գ) Ինքնուրույն աշխատանք՝ (սեմինարի նախապատրաստություն և նախաքննական աշխատանք) գիտական գրականությունից և համացանցից օգտվելու վերլուծական-համադրական հմտությունների կիրառությամբ:

1.6. Դասընթացի բովանդակության յուրացման խնդիրները

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

Գիտելիք և իմացություն

- Կծանոթանա Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և մասամբ Բրիտանական համագործակցության այլ երկրների աշխարհագրության, պատմության, տնտեսության, մշակութային կյանքի, քաղաքականության, ներկայիս քաղաքական զարգացումների հետ:

Ունակ կլինի

(բուն մասնագիտական կարողություններ)

- Ներկայացնել վերը նշված երկրների վերաբերյալ երկրագիտական գիտելիքներ՝ առնչելով դրանք ժամանակակից աշխարհաքաղաքական զարգացումների հետ:
- Ձևավորելու վերլուծական և համադրական մոտեցում Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Կանադայի և Բրիտանական համագործակցության այլ երկրների

որդեգրած պատմա-քաղաքական դիրքորոշումների և վարած արդի քաղաքականության վերաբերյալ:

(ընդհանրական կարողություններ)

- Ստացած գիտելիքները տեսական հիմք կձառայեն աշխարհաքաղաքական հարացույցը պատկերացնելու համար, ուր ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան ունեն որոշակի դերակատարում, որը և ենթադրում է համաշխարհային գործընթացների նկատմամբ որոշակի դիրքորոշում:
- Դասընթացից ստացած գիտելիքներն իրենց գործնական կիրառությունը կգտնեն միջազգայնագետ ուսանողի ապագա միջմշակութային շփումների և դիվանագիտական աշխատանքի ժամանակ:

1.7. Գիտելիքի ստուգման ընթացիկ ձևերը

1. Գործնական պարապմունքների ժամանակ ինքնուրույն աշխատանքի արդյունքների ստուգում՝ հարցման, ելույթի, մեկնաբանության, պարզաբանման, կազմված սլայդ-պատկերների ցուցադրման և հաղորդակցման այլ միջոցների կիրառմամբ:
2. Մեմինարների ընթացքում ներկայացվող թիմային աշխատանքի գնահատում:
3. Ընթացիկ (միջանկյալ) գրավոր և բանավոր քննություններ:

ԲԱԺԻՆ 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Դասընթացի կազմակերպման-մեթոդական տվյալները

| | |
|---|--------------------------|
| Աշխատանքի տեսակը | Ժամաքանակը |
| Ընդհանուր ժամաքանակը | 36 |
| Լսարանային աշխատանք | |
| Դասախոսություններ | 20 |
| Սեմինարներ | 12 |
| Ինքնուրույն աշխատանք | 28 |
| Գիտելիքի ընթացիկ վերահսկման տեսակները (ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր քննություններ) | 1 ժամ մեկ ուսանողի համար |

2.2. Դասընթացի թեմատիկ պլանը

| Թեմաների և բաժինների անվանումները | Ցերեկային ուսուցում | | | |
|---|---------------------|-------------------|------------------|---------------------|
| | Ժամաքանակը | | | |
| | Դասախոս. | Սեմինար պարամունք | Ինքնուրույն աշխ. | Ժամերն ըստ թեմաների |
| Թեմա 1. Ներածական մաս: Դասընթացի նպատակները և խնդիրները: Դասընթացի վերաբերյալ գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների տեսություն: | 2 | | | 2 |
| Թեմա2. Բրիտանական միապետության ստեղծումը. սեղմ պատմական ակնարկ: Միացյալ Թագավորության վարչական բաժանումը, խորհրդանիշները, պետական կառուցվածքը, օրենսդիր և գործադիր մարմինները, քաղաքական և իրավական | 4 | 2 | 4 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| համակարգը: | | | | |
| Թեմա 3. Մեծ Բրիտանիան XX դարի առաջին կեսին: Բրիտանիան ետպատերազմական շրջանում. Բրիտանական համագործակցության ստեղծումը: Բրիտանիայի անդամակցությունը միջազգային կազմակերպություններին /ՄԱԿ, СЕНТО, СЕАТО և այլն/: Բրիտանիան և Եվրամիությունը: Բրիտանիան արդի աշխարհաքաղաքական գործընթացներում: Բրիտանիան որպես միջուկային երկիր, նրա ռազմական ներուժը և անվտանգության համակարգը: Տնտեսության հիմնական ճյուղերը և արտաքին տնտեսական կապերը: Միգրացիոն քաղաքականությունը: | 2 | 2 | 4 | 2 |
| Թեմա 4. Ընդհանուր ակնարկ. Բրիտանական գաղութից մինչև անկախ պետականության ստեղծում: Ամերիկայի Միացյալ Նահանգների աշխարհագրական և վարչական կառուցվածքը: Երկրի խորհրդանիշները: | 2 | | | 2 |
| Թեմա5. ԱՄՆ-ի սահմանադրությունը: ԱՄՆ-ի վարչա-քաղաքական կառուցվածքը: Քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգը: | 2 | 2 | 4 | 2 |
| Թեմա 6. ԱՄՆ-ի մասնակցությունը Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներին: ԱՄՆ-ի տնտեսական զարգացման դինամիկան: Ռասայական խտրականության խնդիրը 50-60 –ական թվականներին: Միացյալ նահանգները ժամանակակից աշխարհաքաղաքական համայնապատկերում: | 2 | 2 | 4 | 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| <p>Թեմա 7. Ընդհանուր ակնարկ Կանադայի աշխարհագրության, պատմության, տնտեսության և ներգաղթի քաղաքականության վերաբերյալ: Երկրի պետական կառուցվածքը և ազգային խորհրդանիշները: Կանադան որպես Բրիտանական համագործակցության անդամ:</p> | 2 | 2 | 4 | 2 |
| <p>Թեմա 8. Ընդհանուր ակնարկ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի աշխարհագրական և պատմական առանձնահատկությունների վերաբերյալ: Ավստրալիան և Նոր Զելանդիան՝ Բրիտանական նախկին դոմինիոններ: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի ազգային խորհրդանիշները, վարչական բաժանումները, կառավարման և քաղաքական համակարգերը: Ավստրալիայի դերակատարումը Խաղաղօվկիանոսյան Հարավ-արևելյան տարածաշրջանում:</p> | 2 | | | 2 |
| <p>Թեմա 9. Բրիտանական համագործակցության երկրների կրթական համակարգերը, մշակույթն ու արվեստը: Անգլերենը աշխարհի գլոբալացման գործընթացում:</p> | 2 | 2 | 4 | 2 |

2.3. Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ 1. (2 ժամ) - Ներածական մաս: Դասընթացի նպատակները և խնդիրները: Դասընթացի վերաբերյալ գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների տեսություն:

Երկրագիտությունը որպես միջդիսցիպլինար գիտակարգ: Երկրագիտության ծագման ակունքներն ու հետագա տարածումը: Երկրագիտության առարկան, խնդիրները, մեթոդները: Երկրագիտության կապը այլ գիտակարգերի հետ: Երկրագիտության ճյուղերը: Տեղեկատվական աղբյուրների՝ գիտական գրականություն, համացանց համառոտ տեսություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Lszanton (ed.) *The Politics of Knowledge: Area Studies and the Disciplines*, University of California Press, 2002. <http://escholarship.org/uc/item/>
2. Bates R. *Area Studies and the Discipline: A Useful Controversy? PS: Political Science and Politics*, Vol. 30, No. 2, Jun. 1997, pp. 166-169
3. Cumings B. *Boundary Displacement: Area Studies and International Studies during and after the Cold War*. in Bulletin of Concerned Asian Scholars 29 (1997).<http://www.mtholyoke.edu/acad/intrel/cumings2.htm>
4. Moseley, W.G. 2009. *Area Studies in a Global Context*. Chronicle of Higher Education. Nov 29. <http://chronicle.com/article/Area-Studies-in-a-Global-Co/49284/>
5. Севастьянов Д. В. *Основы страноведения*. М. Академия, 2008
6. Мироненко Н. С. *Страноведение. Теория и методы*. М., 2001.
7. Лагутенко Б. Т. *Страноведение*. М., 1998.
8. Селиванова Л.В. *Страноведение. Учебно-методическое пособие*. – Екатеринбург, 2007.

ԹԵՄԱ 2. (4 ժամ) – Բրիտանական միապետության ստեղծումը. սեղմ պատմական ակնարկ: Միացյալ Թագավորության վարչական բաժանումը, խորհրդանիշները, պետական կառուցվածքը, օրենսդիր և գործադիր մարմինները, քաղաքական և իրավական համակարգը:

Բրիտանիան Քարե Դարում. Օրքնի և Սթոունհենջ: Կելտերը որպես Բրիտանական կղզիների հնամենի բնիկներ: Հռոմեական կայսրության տիրապետությունը:

Հյուսիսային Եվրոպայից անգլերի, սաքսերի և պիկտերի ներխուժումը և վերաբնակեցումը: Վիկինգների արշավները և տեղայնացման գործընթացը: Անգլիայի միավորումը թագավորության ներքո: Վիլհելմ Նորմանդացու արշավանքը:

Պլանտագենետների, Թյուդորների և Հանովերների տները: Պառլամենտի սկզբնավորումը: Ազատությունների մեծ խարտիան (Magna Carta) : Հանրային օրենքի (Common Law) ներմուծումը: Հենրի VIII. Անգլիկանական եկեղեցու անջատումը Հռոմի կաթոլիկ եկեղեցուց: Համայնքների պալատի ակունքները: Գաղութատիրական էքսպանսիան Եղիսաբեթ I-ի օրոք: Շոտլանդիայի, Իռլանդիայի միավորումը, և Բրիտանիայի միացյալ թագավորության կազմավորումը: Բրիտանական դրոշը, օրհներգը, այլ խորհրդանիշներ: Քաղաքացիական պատերազմը և հանրապետության տարիները. Օլիվեր Կրոմվել և Իրավունքների հռչակագիրը: Թագավորության վերահաստատումը: Մեծ Բրիտանիան որպես «աշխարհի արհեստանոց». արդյունաբերական հեղափոխությունը: Ամերիկյան գաղութների կորուստը: Սոցիալ-տնտեսական վերելքը Վիկտորիա թագուհու գահակալության ժամանակ: Գաղութատիրական քաղաքականությունը:

Երկրի պետական կառուցվածքը՝ օրենսդիր իշխանությունը, գործադիր իշխանությունը: Պառլամենտի գործունեությունը: Շոտլանդիայի պառլամենտը, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի Ազգային ժողովները:

Բրիտանիայի սահմանադրական իրավունքը:

Բրիտանիայի քաղաքական և ընտրական համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Garwood Chr. *Aspects of Britain and the USA*, Oxford University Press, 2000.
2. Gasparyan G. *British Studies*. Yerevan, Manmar 2010.
3. Richardson J. ed. *European Union: Power and Policy-making*, Routledge, 2006.
4. Bennet J. *The Anglosphere Challenge: Why the English-speaking Nations will Lead the Way in the Twenty-first Century*, 2007.
5. Watt D. & C. Pilkington, *Britain in the European Union Today*, 2005.
6. Hardt M. & Negri A. *Commonwealth, U.S.*, 2011.
7. King A. *The British Constitution*, Oxford University Press, 2010.
8. Bromhead P. *Life in Modern Britain*, Longman, 1993.
9. McDowall D. *Britain in Close-up*, Longman, 2003.

10. Չարապետյան Ա. *Մեր հարևան Եվրոպական միությունը. Մեծ Բրիտանիա*, Երևան, 2009.
11. Борисевич М.М. *История государства и права зарубежных стран*. М. 2007.
12. Бромхед П. *Эволюция Британской конституции*. 1978
13. Кристофер Д. *Англия. История страны*. М., Эксмо, 2007
14. Воеводова Е.В. *Великобритания: история и культура*. Изд-во «МГИМО – Университет», 2009г.
15. Маркушевская А.П. *Великобритания*. Учебное пособие по страноведению, Санкт-Петербург, 2008.
16. <http://eng-history.ru>
17. http://europa.eu/index_en.htm
18. <http://www.great-britain.co.uk/history/history.htm>
19. <http://www.direct.gov.uk/en/index.htm>
20. <http://www.parliament.uk>

ԹԵՄԱ 3. (2ժամ) – Մեծ Բրիտանիան XX դարի առաջին կեսին: Բրիտանիան ետպատերազմական շրջանում. Բրիտանական համագործակցության ստեղծումը: Բրիտանիայի անդամակցությունը միջազգային կազմակերպություններին /ՄԱԿ, СЕНТО, СЕАТО և այլն/: Բրիտանիան և Եվրամիությունը: Բրիտանիան արդի աշխարհաքաղաքական գործընթացներում: Բրիտանիան որպես միջուկային երկիր, նրա ռազմական ներուժը և անվտանգության համակարգը: Տնտեսության հիմնական ճյուղերը և արտաքին տնտեսական կապերը: Միգրացիոն քաղաքականությունը:

Բրիտանական կայսրությունից դեպի Ազգերի համագործակցություն: Բրիտանական համագործակցության ստեղծման և զարգացման փուլերը: Համագործակցության հիմնական ոլորտները: Բրիտանիայի մասնակցությունը նորաստեղծ միջազգային կազմակերպություններում: Վաթսունականների լեյբորիստական շարժումը: Տեղեկագրի: Բրիտանիան և Եվրամիությունը. համագործակցության գերակայությունները և խնդիրները:

Կրոնական հանդուրժողականությունն ու դրա հիմնախնդիրը Բրիտանական հասարակությունում:

Բրիտանիայի դերակատարումը արդի աշխարհաքաղաքական գործընթացներում: Երկրի քաղաքականության գերակա ուղղությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Life in the United Kingdom*, London, Home Office TSO publication, 2013.
2. O'Driscoll J. *Britain for Learners of English*, Oxford; Oxford University Press, 2013.
3. Dimbleby D. *A Picture of Britain*, BC Press Office, 2005.
4. Thomas D. St. J. *Journey through Britain*, UK, Francis Lincoln Publishing, 2010.
5. Leapman M. D. *Eyewitness travel: Great Britain*, London, Penguin publishing, 2003.
6. McCormick J. *Contemporary Britain*, London, Palgrave Macmillan, 2003.
7. Farrel M. *British Life and Institutions*, Publisher: Klett (Ernst) Verlag, Stuttgart, 2000.
8. Mcdowall D. *Britain in close-up*, UK, Longman publishing, 2000.
9. Norman L. *Mastering Modern British History*, Palgrave Master Series, 2009.
10. Jordan A. G. *British Politics and the Policy Process*, Allen and Unwin, 1989.
11. Clark A. *Political Parties in the UK*, Palgrave Macmillan, 2012.
12. Pearsall R. *Kings and Queens: a History of British Monarchy*, 2005.
13. Сенченко И. А. *Государство и право, история и культура Великобритании и США*, 2009.
14. Томахин Г. Д. *Великобритания*, М. 2001.
15. www.pm.gov.uk
16. www.britannia.com
17. www.royal.gov.uk
18. www.eurohistory.com
19. www.romans-in-britain.org.uk/clb and [celtic](http://www.romans-in-britain.org.uk/celtic) life.htm

ԹԵՄԱ 4. (2 ժամ) - Ընդհանուր ակնարկ. Բրիտանական գաղութից մինչև անկախ պետականության ստեղծում: Ամերիկայի միացյալ Նահանգների աշխարհագրական և վարչական կառուցվածքը: Երկրի խորհրդանիշները:

Ամերիկայի Միացյալ Նահանգների աշխարհագրական և վարչական կառուցվածքը: Երկրի խորհրդանիշները:

Պատմական անդրադարձ պետականության ստեղծման և զարգացման սկզբնական փուլերով. Նոր աշխարհի բացահայտումը, պիլիգրիմները, առաջին և երկրորդ կոնստիտենտալ համաժողովները, պայքար անկախության համար, սահմանադրության ընդունումը, հնդկացիների արտաքսումն իրենց հողերից,

քաղաքացիական պատերազմի պատճառներն, արդյունքներն ու հետևանքները, գաղութային էքսպանսիայի քաղաքականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Baxter A. *The USA*, Oxford University Press, 2009.
2. George C. *Portrait of the USA*, US Information Agency Press, 1997.
3. Elaine K. *About the USA*, Delta Systems Co. 1989.
4. *The USA Book: a journey through America*, Lonely Planet, 2009
5. Stone O. & Kuznick P. *The Untold History of the United States*, NY Gallery Books, 2013.
6. Zinn H. *A People's History of the United States, U.S.*, Harper Collins Publishers, 2005.
7. Herring G. *From Colony to Superpower: U.S. Foreign Relations since 1776*, NY, Oxford University Press, 2011.
8. Muntone S. *U.S. History Demystified*, McGraw-Hill Companies, 2012.
9. Куропяткин Т. П. *История внешней политики и дипломатии США*, М., 1997.
10. Энтов Р. Ш. *Модель экономики США. Эволюция политической системы*, М. 1985.

ԹԵՄԱ 5. (2 ժամ) ԱՄՆ-ի սահմանադրությունը: ԱՄՆ-ի վարչա-քաղաքական կառուցվածքը: Քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգը:

Սահմանադրության ստեղծումը: Սահմանադրական բարեփոխումները: Սահմանադրությունը և երկրի նախագահը: ԱՄՆ-ի վարչա-քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունները. ազգային և նահանգային կառավարությունների օրենսդիր ճյուղերը, ազգային և նահանգային կառավարությունների գործադիր մարմինները, Սենատի և Ներկայացուցիչների պալատի իրավասությունները, ԱՄՆ-ի ազգային և նահանգային դատական իշխանությունները, հակակշիռների և զսպումների քաղաքականությունը:

ԱՄՆ-ի քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգը: Լոբիզմը ԱՄՆ-ի քաղաքական համայնապատկերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Morison S. E. *Sources and Documents Illustrating the American Revolution and the Formation of the Federal Constitution*. London, Oxford University Press, 1975.

2. Morris R. B. *Forging of the Union*, New York, 1987
3. Frederick W. M. *Power, Pride and the Purse: Diplomatic Origins of Constitution*, *Diplomatic History*, (Fall 1987).
4. Norman A. G. *Isolationism and Antifederalism: the Ratification Debates*. *Diplomatic History*, (Fall 1987)
5. <https://www.usa.gov>
6. <http://www.state.gov>
7. Herring, G. C. *From Colony to Superpower: U.S. Foreign Relations Since 1776*. New York: Oxford University Press, 2008
8. Сафонов В. Н. *Конституция США и социально-экономические права граждан*, М., 2007.
9. Բարխուդարյան Հ. *ԱՄՆ սահմանադրությունն ու իշխանությունները*, Եր. 2014.
10. Վիլսոն Ջ. *ԱՄՆ-ի պետական ապարատը և քաղաքականության կերտումը*, Երևան, 1994.
11. Վիլսոն Ջ. *ԱՄՆ-ի սահմանադրությունը*, Երևան, 1993.
12. Лапшина И. К. *Разделенное правление в США*, М. ПОССПЭН, 2008.
13. Шестаков В. П. *Америка извне и изнутри: очерки американской культуры и национального характера*. М., 1996

ԹԵՄԱ 6. (2 ժամ) - ԱՄՆ-ի մասնակցությունը Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմներին: ԱՄՆ-ի տնտեսական զարգացման դինամիկան: Միացյալ Նահանգները ժամանակակից աշխարհաքաղաքական համայնապատկերում: Ռասայական խտրականության խնդիրը 50-60 -ական թվականներին:

ԱՄՆ-ի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին: ԱՄՆ-ի հայտնի իբրև գերտերություն: Մեծ ճգնաժամը (1929) և դրանից դուրս գալու Ռուզվելտի ծրագիրը: ԱՄՆ-ի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմին: Ետպատերազմական Ամերիկան: Սևամորթ բնակչության պայքարը հավասար իրավունքների համար/Մ.Լ. Քինգ/: ԱՄՆ-ի դեմոգրաֆիական բազմազանությունը և ներգաղթի քաղաքականությունը: Կորեական և վիետնամական պատերազմները:

ԱՄՆ-ը արդի աշխարհաքաղաքական համայնապատկերում: ԱՄՆ-ի մասնակցությունը միջազգային կազմակերպություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Zakaria F. *The Post-American World*, NY-London, W.W. Norton Company, 2011
2. McGann J. *Think Tanks and Policy Advice in the United States. Academics, Advisors and Advocates*. N. Y., Routledge, 2007
3. Sexton Jay, *The Monroe Doctrine: Empire and Nation in Nineteenth-Century America*, 2012.
4. Sugrue T. J. *Sweet Land of Liberty: The Forgotten Struggle for thr Civil Rights in the North*, New York, Random House, 2009.
5. Keegan J. *The First World War*. New York: Vintage Books, 2000.
6. Kennedy D. *Freedom from Fear: The American People in Depression and War 1929-1945*. New York, Oxford University Press, 2001
7. Beever A. *D-Day: The Battle for Normandy*. New York, Penguin Books, 2010.
8. Furet F. *The Passing of an Illusion: The Idea of Communism in the Twentieth Century*. Chicago, University of Chicago Press, 1999.

ԹԵՄԱ 7. (2 ժամ) - Ընդհանուր ակնարկ Կանադայի աշխարհագրության, պատմության, տնտեսության և ներգաղթի քաղաքականության վերաբերալ: Երկրի պետական կառուցվածքը և ազգային խորհրդանիշները: Կանադան որպես Բրիտանական համագործակցության անդամ:

Կանադայի աշխարհագրությունը, կլիման, բնական պաշարները, բնակչության կազմը և ներգաղթի քաղաքականությունը:

Կանադայի ազգային խորհրդանիշները: Երկրի պետական կառուցվածքը և կառավարման երեք մակարդակները:

Կանադայի քաղաքական կառուցվածքը և քաղաքական կուսակցությունները: Կանադայի ընտրական և իրավական համակարգերը:

Կանադայի արտաքին քաղաքականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Sauve V. L. *Gateway to Canada*, Toronto, Oxford University Press, 1997.
2. Burgess M. *Canadian Federalism: Theory and Practice*, London, Pinter Publishers, 1990.
3. Buchignani N. L. *Public Policy and Native Peoples in Canada*, 1983.

4. Ralston S. J. *A Fair Country: Telling Truths about Canada*, Penguin Publishers, 2008.
5. Moore Ch. *1867: How the Fathers Made a Deal*, Toronto, University of Toronto Press, 1997.
6. Харт М. Канада – *Торговая нация*, Экономика – политика – культура, N. 12, 2003.
7. Ажаева В. В. *Канадская социал-демократия*, М., 1988.
8. Сороко-Цюпа О. С. *История Канады*, М., 1985.

ԹԵՄԱ 8. (2 ժամ) - Ավստրալիայի և Նոր Զելանդիայի աշխարհագրական և պատմական առանձնահատկությունների ընդհանուր ակնարկ: Ավստրալիան և Նոր Զելանդիան՝ բրիտանական նախկին դոմինիոններ: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի ազգային խորհրդանիշները, վարչական բաժանումները, կառավարման և քաղաքական համակարգերը: Ավստրալիայի դերակատարումը Խաղաղօվկիանոսյան Հարավ-արևելյան տարածաշրջանում:

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի տեղաբնակները և եվրոպացիների ներգաղթը: Ներգաղթի քաղաքականությունը մեր օրերում: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի անցումը բրիտանական գաղութների կարգավիճակից Բրիտանական համագործակցության անդամ երկրների: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի ազգային խորհրդանիշները և վարչական բաժանումները: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի կառավարման համակարգը, քաղաքական կուսակցությունները և ընտրական համակարգերը: Ավստրալիայի և Նոր Զելանդիայի արտաքին քաղաքականության արդի հիմնախնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Australia*, Lonely Planet, Singapore, 2013.
2. *New Zealand*, Lonely Planet, 2014.
3. Lindop C. *Australia and New Zealand*, USA, Oxford University Press, 2008.
4. Currey O'Neil, *Explore Australia*. UK, Windsor Voc., 1980.
5. Milagliotta N. et al. *The Australian Political System in Action*, Oxford University Press, 2009.
6. *The Oxford Illustrated History of New Zealand*, 1966.
7. Окладников Е. А. *Америка, Австралия, Океания, Азия, Африка*, СПб, 2003.
8. Рубцов Б. Б. *Австралия: государство и континент*, 1988.
9. Малаховский К. В. *История Австралии*, М., 1980.

10. Մուրադյան Յ. *Արտասահմանյան երկրների տնտեսական և սոցիալական աշխարհագրություն*, Եր., 1998.

ԹԵՄԱ 9 (2 ժամ) - Բրիտանական համագործակցության երկրների կրթական համակարգերը, մշակույթն ու արվեստը: Անգլերենը աշխարհի գլոբալացման գործընթացում:

Ամերիկյան և բրիտանական համալսարանները վարկանիշային աղյուսակներում: Research and Development գիտահետազոտական ուսումնասիրությունների կենտրոնների ներդրումը երկրի անվտանգության գործում: Նրանց դերը նորագույն տեխնոլոգիաների և տեսությունների մշակման մեջ: Think tank-երը որպես տեսական և գործնական լուծումների դարբնոց:

Անգլիական թատրոնը, գրականությունը և գեղարվեստի դպրոցները: Բրիտանիայի թանգարանները որպես համաշխարհային մշակույթ ամբարած կենտրոններ: Անգլերենն իբրև ազդեցության տարածման հզոր միջոց (lingua franca):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Tomlinson S. *Education in the Post-Welfare Society*, Open University Press, 2005.
2. Micklewright J. & Schnepf S. V. *Educational achievement in English-speaking countries: Do different surveys tell the same story?* Germany, IZA Discussion Paper, 2004.
3. Christopher D. P. *British Culture*, NY, Routledge, 2006.
4. Datesman M. et al. *American ways: an Introduction to American Culture*, Longman, 2005.
5. Wierzbicka A. *English: Meaning and Culture*, Oxford University Press, 2006.
6. British Art Network: Tate, <http://www.tate.org.uk/about/projects/british-art-network>.
7. Shapiro E. ed. *American Art*, University of Chicago Press, 2010.
8. Reed A. W. *Myths and Legends of Australia*, 1965.
9. Barber R. *Myths and Legends of the British Isles*, Boydell Press, 2004.
10. Crystal D. *English as a Global Language*, 2012.
11. Smith J. A. *The Idea Brokers: Think Tanks and the Rise of the New Policy Elite*. N.Y., The Free Press, 1991